**1.** Առանձնավորի բառերն արտագրի՛ր՝ ըստ առաջին հնչյուն-տառերի այբբենական հաջորդականության (նույն հնչյուն-տառով սկսվող մեկական բառ գրիր).



### Աստղե վզնոց

Թռչեմ գնամ երկինքն ի վեր,
Բամբակ առնեմ ճերմակ ամպից,
Հետո նստեմ լուսնի վրա
Ու թել մանեմ նուրբ ու անքիծ:
Աստղեր շարեմ թելի վրա,
Թևատարած իջնեմ կրկին
Եվ վզնոցը այդ աստղազարդ
Նվեր բերեմ իմ մայրիկին:

*Պ. Խաչատրյան*

***Օրինակ՝*** *աստղ, բամբակ, գնամ, (դ), ...*

**2.** Տրված բառերի հնչյուն-տառերով կազմիր նո՛ր բառեր (*կարող եք զույգերով կամ խմբերով մրցել*).

*հաղթություն* *լուսամուտ*

**3.** Արտագրի՛ր և յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր, թե դրանցից յուրաքանչյուրը քանի՛ հնչյուն ունի ու քանի՛ տառ.

*ձեռք, երգել, ճամփա, դպրոց, ոսկեհյուս, մինչև, որդ, երազ, այնպես, օրորվել:*

***Օրինակ*** *՝ երգել – 6 հնչյուն, 5 տառ*

**4.** Տրված բառակապակցություններում լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *է (Է)* կամ *ե (Ե)*.



*գեղեցիկ __ջանշան, փոքրիկ __մմա, հպարտ __ղջերու, սուր __ղջյուրներ, քաղցր __գիպտացորեն, ուշ __ր__կո, ջինջ __րկինք, քաղաք __ջմիածին, __քսկուրսիա դեպի Գառնի, կոմպոզիտոր __դվարդ Միրզոյան, __ր__քշաբթի առավոտ, քանդակագործ __րվանդ Քոչար, բանաստեղծ __ղիշե Չարենց, սառը __ղյամ, փափուկ __ր__սսրբիչ:*

**5.** Լրացրո՛ւ բաց թողնված բառերը՝ փոփոխելով դրանք, եթե պետք է.



*օրագիր, ոռնոց, ողկույզ, որդի, ոտաբոբիկ, ոսկեգույն, օդանցք, օգնական, օդապարիկ, օձիք:*

1. *Ձմռան գիշերներին անտառից լսվում է գայլերի* ____________:
2. *Կապույտ երկնքում լողում էին գույնզգույն* ________________________:
3. *Խատուտիկի դեղին ծաղիկներից մարգագետինը* ________________________ *էր դարձել:*
4. *Ծաղավորը հավանեց իր կրտսեր* ____________ *աշխատանքը:*
5. *Սենյակի բաց* ______________________ *ներս էին թռչում դեղին տերևները:*
6. *Ոսկեհատը և խաղողի մի մեծ* ______________________ *քաղեց:*
7. *Ոսկանիկը* _________________ *վազվզում էր տաք ավազի վրա:*
8. *Օնիկի* _________________________ *մեջ մի մեծ «5» էր ավելացել:*
9. *Ոսկանը պապիկի* ______________________ *է:*
10. *Տիկնիկի զգեստը սպիտակ* _______________ *ունի:*



**6.** Տրված բառերի դիմաց գրի՛ր *իմաստով մոտ* բառեր.

*սթափվել* – *ուշքի գալ* ____________________

*ուրախանալ* – ______________________________

*շիկնել* – ______________________________

*փոքրիկ* – ______________________________

*խմբվել* – ______________________________

*անմիջապես* – ______________________________

*անուշ (ձայն)* – ______________________________

*փափուկ* – ______________________________

*փնտրել* – ______________________________

*հանճար* – ______________________________

*հեզ* – ______________________________

**7.** Յուրաքանչյուր բառի իմաստը բացատրի՛ր այն կազմող բառերի օգնությամբ (*աշխատեցե՛ք խմբերով*).

*մեծագործ* – *մեծ գործեր կատարող*

*մանրաքայլ* – *մանր քայլերով*

*գրապահարան* – ____________________

*կարմրաքթիկ* – ____________________

*սևաչյա* – ____________________

*ընկերասեր* – ____________________

*բթամատ* – ____________________

*ցուցամատ* – ____________________

*միջնամատ* – ____________________

*մատնեմատ* – ____________________

**8.** ա) Տրված երկու շարք բառերից ընտրի՛ր հարմար զույգեր և կազմի՛ր բառակապակցություններ.

- *բարի, զվարթ, մտերիմ, կարմրաքթիկ, սևաչյա, զանգրահեր, ուշադիր, ընկերասեր, ոսկեգույն (սև).*
- *աղջիկ (տղա), սիրտ, մազեր, դեմք, ընկեր, տրամադրություն, աշակերտ:*



________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

բ) Քո կազմած բառակապակցություններից օգտվելով՝ նկարագրի՛ր մտերիմ ընկերոջդ (ընկերուհուդ), իսկ նրա նկարը կարող ես փակցնել շրջանակի մեջ.



**9.** Արտագրի՛ր տրված բառակապակցությունները՝ կապույտ գույնով գրված բառերի փոխարեն գրելով դրանց *հակառակ իմաստն* ունեցող բառերը.

*պայծառ օր* — *մռայլ, անարև օր*

*մոտ **նայել*** —

*մոտենալ **երեխային** (հց)* —

*ուրախ **նայել*** —

*ներս **վազել*** —

*ճիշտ **գրել*** —

*գիրուկ **մարդ*** —

*անտառային **արշավուրդ*** —

***դասերը** մոռանալ* —

*դժվար **խնդիր*** —

***գիրքը** բացել* —

**10.** Օգտվելով նկարներից՝ լրացրո՛ւ նախադասությունները (բառի վերջում ավելացրո՛ւ *ը* կամ *ն*).

*1. ........................ և ........................ ընտանի կենդանիներ են:*

*2. Գայլերի ........................ ոռնում էր գիշերվա լռության մեջ:*

*3. ........................ խոտակեր կենդանի է:*

*4. Կռունկների ........................ թռչում էր աշնանային երկնքում:*

*6. ........................ վայրի կենդանի է:*

*7. ........................ սողալով մտավ քարերի արանքը:*



**11.** ա) Կարդացե՛ք այս պատմությունը արտահայտիչ և որոշեցե՛ք՝ ձեզ ծանոթ ի՞նչ *կետադրական նշաններ* կան.

## Արձագանք

Փոքրիկ Արտաշեսը շվշվացնելով գնում էր ձորով՝ իրենց հորթը փնտրելու:

Նրան թվաց, թե մի ուրիշն էլ է շվշվացնում:



Հենց իմացավ՝ եղբայրն է. կանգնեց, ձայն տվեց.

– Վահա՛ն, դո՞ւ ես:

– Ե՛ս ...

– Մեր հորթը ո՞ւր գնաց, տեսա՞ր:

– Սա՛ր ...

– Հանա՞ք ես անում, ինչ է՛:

– Չէ՛ ... [redacted]

– Վա՜յ, էդ հո գայլը կուտի՜:

– Ուտի՜ ...

Արտաշեսը լաց լինելով վազեց տուն. տեսավ՝ հորթն էլ է տանը, Վահանն էլ:

*Հ. Թումանյան*

բ) տարբեր գույներով ընդգծեցե՛ք *հարցական* (˜) և *բացականչական* (՜) *նշան* ունեցող բառերը. որոշեցե՛ք, թե ինչպե՛ս կարդացիք այդ բառերը և ինչո՛ւ (*աշխատեցե՛ք խմբերով*):

**12.** Հանելուկների պատասխանները գրի՛ր և նկարի՛ր.

Ասես մի փոքրիկ
Ալիք է թեում,
Սակայն նշան է
Բառի վերևում:

_______________

Նաև այն բառի
Վերջում եմ դրվում,
Երբ որ այդ բառը
Կրճատ է գրվում:

_______________

Երկու կետ եմ ես.
Հենց վերջին հասնես,
Քո մտքին երկար
Դադար կտաս ես:

_______________

Երբ միջակետից
Մի պոչիկ կախվեց,
Նա իսկույն ուրիշ
Նշանի փոխվեց:

______________

Փոքրիկ նշան եմ՝
Փոքրիկ հոնքի պես,
Դադար եմ տալիս
Քո մտքերին ես:

______________

**13.** Ճի՛շտ միացրու ասացվածքների սկիզբն ու վերջը և գրի՛ր.

Ժամանակը — Գիտելիքը — Ով ալարի, — ոչ դալարի: — Գործը վաղվան մնաց՝ — ում է: — իմացիր՝ կորավ գնաց: — ոսկի է:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**14.** Որոշի՛ր նախադասությունների սկիզբն ու վերջը և արտագրի՛ր դրանք ճիշտ ուղղագրությամբ.

*մեր կատուն ունի երեք ձագ փոքրիկ ձագուկները շատ են սիրում քնել սև ու սպիտակ փիսիկները քնում են զամբյուղի մեջ մայր փիսոն նրանց լիզում է ու լողացնում ձագուկ փիսիկները շատ սիրունիկ ու փափլիկ են*



**Մեր տունը**

**15.** Ինքնաքեննադատությամբ գրի՛ր *«Երգ մայրիկիս»* բանաստեղծության քո հավանած հատվածը.



**16.** Յուրաքանչյուր բառի իմաստը բացատրի՛ր այն կազմող բառերի օգնությամբ (*աշխատեցե՛ք խմբերով*).

*ճշմարտախոս* — *ճշմարիտը՝ ճիշտը խոսող*

*հոգատար* — *հոգ տանող*

*մկրատաչե* —

*ծաղկաման* —

*ծաղկեփունջ* —

*հորեղբայր* —

*խաղընկեր* —

*սարալանջ* —

**17.** Բացատրի՛ր տրված զույգ բառերի իմաստերն ու ուղղագրությունը և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ.

*արև — Արև* *սև — Սևակ*

*պարգև — Պարգև* *թև — Տաթև*

**18.** ա) Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը.

բ) այդ բառերով կազմի՛ր մեկական բառակապակցություն.



**19.** *Մասնավոր իմաստ* ունեցող յուրաքանչյուր բառախմբի դիմաց գրի՛ր նրա *ընդհանուր իմաստն* ունեցող բառը՝ օրինակի պես.

- *ափսե, ըմպանակ, գդալ, կաթսա, պատառաքաղ — սպասք*
- *գրասեղան, պահարան, մահճակալ, բազմոց, բազկաթոռ —* ________
- *տանձ, դեղձ, սերկևիլ, նուռ, խաղող, խնձոր —* ________
- *մատիտ, քանոն, գրիչ, ռետին, տետր —* ________
- *գլխարկ, վերարկու, ձեռնոց, գուլպա —* ________
- *Երևան, Իջևան, Էջմիածին, Մոսկվա, Հռոմ —* ________

**20.** Կարդա՛ ոտանավորը, գտի՛ր այն բառերը, որոնք ունեն է, ե տառերը. կապույտ գույնով ընդգծի՛ր «է», իսկ կանաչով՝ «յէ» արտասանվող հնչյուն-տառերը.



## Տատիկն ու թոռնիկը



*– Տատի՛կ, ինչո՞ւ մեր բակում*
*– Ծիտիկները չեն երգում:*
*– Չոր է բակը, իմ Լալա՛,*
*Այստեղ ծի՞տ կծլվլա:*
*Ա՛յ թե հողը դու փորես,*
*Գցես սիրուն մի պարտեզ,*
*Այն ժամանակ, ի՜նչ ասեմ,*
*Ես էլ համերգ կլսեմ:*

*Թոռնիկն ընկավ ձեռ ու ոտ...*
*Բակի հողը մշակեց,*
*Ծաղիկ ցանեց, ծառ տնկեց,*
*Ու չոր բակը կանաչեց:*
*—Վա՜յ, տատի՜կ ջան, ո՞ւր ես, ո՞ւր,*
*Ծիտիկներն են եկել հյուր ...*
*Մի արի տե՜ս՝ ի՜նչ երգ է,*
*Ի՜նչ գեղեցիկ համերգ է ...*

*Ըստ Պ. Խաչատրյանի*

**21.** Պատասխանելով հետևյալ հարցերին՝ գրի՛ր փոքրիկ շարադրություն՝ *«Ո՞վ եմ ես»* վերնագրով.



1. Ի՞նչ է քո անուն - ազգանունը:
2. Քանի՞ տարեկան ես:
3. Ո՞ր դասարանում ես սովորում:
4. Ովքե՞ր են քո մտերիմ դասընկերները:
5. Ինչո՞ւ ես սիրում նրանց :

**22.** ա) Կարդացե՛ք և ընդգծեցե՛ք *ընդհանուր իմաստ* ունեցող բառերը (*աշխատեցե՛ք զույգերով*).

բ) *Ընդհանուր իմաստ* ունեցող յուրաքանչյուր բառի դիմաց աղյուսակում գրեցե՛ք նրա *մասնավոր իմաստն* ունեցող բառերը.



*բժիշկ, քաղաք, պղպեղ, ընձուղտ, բաղրիջան, բանջարեղեն, վարունգ, ուրագ, առյուծ, նկարիչ, մարդ, բահ, գործիք, սղոց, արջ, կրիա, Աշտարակ, սխտոր, Շուշի, Վանաձոր, կենդանի, Սևան, երաժիշտ, ուսուցչուհի, հարթիչ, բողկ:*



| Ընդհանուր իմաստ ունեցող բառեր | Մասնավոր իմաստ ունեցող բառեր |
|---|---|
| *մարդ* | *բժիշկ, նկարիչ, երաժիշտ, ուսուցչուհի* |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**23.** Տրված բառերի դիմաց գրի՛ր *իմաստով մոտ* բառեր.

*գնալ* – *ուղևորվել, մեկնել, երթալ, ճանապարհվել ...*
*ննջել* – __________
*զուրգուրել* – __________
*սար* – __________
*քաղցած* – __________
*հուրավետ* – __________
*դաստիրու* – __________
*մաքուր* – __________
*անափ* – __________

**24.** Ուշադի՛ր կարդա՛ և *հարցական նշա՛ն* (՞) դի՛ր այն բառերի վրա, որոնք հարցում են արտահայտում.

## ա)Յոթ ազնիվ ընկերները



*Ես յոթ ազնիվ ընկեր ունեմ՝*
*Հավատարիմ ու բարի.*
*Նրանք են ինձ մեկ-մեկ պատմում*
*Գաղտնիքները աշխարհի:*
*Ու թե մի բան ճանում է մութ,*
*Որ-ը, ինչպես-ն ու ինչու-ն,*
*Ով-ն ու երբ-ը, ում-ն ու ինչ-ը*
*Իսկույն ինձ մութ են թողնում:*



*Ռ. Կիպլինգ*

## բ) Ինչ նվիրեմ



*Իմ անուշիկ մայրիկին,*
*Քաղցր ու սիրուն մայրիկին*
*Ինչ նվիրեմ թանկագին՝*
*Մայրիկների այս տոնին:*
*Ինչը նրան կսազի,*
*Ինչը նրան ի սրտե*
*Կուրախացնի, կհուզի.*
*Ես ինչ գտնեմ արժանի*
*Իմ խելացի մայրիկին,*
*Բարի ու լավ մայրիկին:*

*Ա. Պարսամյան*

**25.** Կարդա՛ ուղղագրությունը. գտի՛ր այն բառերը, որոնք ունեն օ, ո տառերը. կապույտ գույնով ընդգծի՛ր «օ», իսկ կանաչով՝ «վօ» արտասանվող հնչյուն-տառերը.

## Լորտու



Ասես դեղնավուն
Ձիգ պարան լինի.
Երբ ձեռք չտաս,
Ոչինչ չի անի:

Օձը լորտուից
Հեռու է սողում,
Իսկ լորտուն փշոտ
Ոզնուց է դողում:

*Ս. Մուրադյան*

**26.** Լրացրո՛ւ նախադասությունները համապատասխան բառերով. ուշադրությո՛ւն դարձրու դրանց ուղղագրությանը.

## Այգում

*______________, ______________ և ______________ եկել էին տատիկին ու պապիկին օգնելու:*

*Ո՛ր կողմը նայում էիր, ______________ ծաղիկներ էին: Խաղողի վազերից կախված էին շողշողուն ______________, իսկ տերևների միջից ժպտում էին կարմրաթուշ դեղձն ու ______________ տանձը:*

*Գեղեցիկ է աշնանային ______________:*

այգի
Կորյուն
Հրաչյա
Արուսյակ
բազմագույն
հյութալի
ողկույզ

**27.** Ուշադիր կարդա՛ և *բացականչական նշա՛ն* (-) դիր այն բառերի վրա, որտեղ պետք է.

*ա) Ինչքան բան գիտի*
*Մեր ուսուցիչը.*
*Իմ իմացածը*
*Շատ, շատ, շատ քիչ է ...*

*Ս. Մուրադյան*



բ) Հալվեց ձյունը.
Տես, գարուն է
Սարերում։
Ջան, լե, լե, լե։
Ջան, լե, լե, լե։



Ինչ սիրուն է
Վառ գարունը,
Ինչ սիրուն։
Ջան, լե, լե, լե։
Ջան, լե, լե, լե։

*(հայկական ժողովրդական երգ)*

**28.** ա) Յուրաքանչյուր նկարի դիմաց գրի՛ր համապատասխան բառը. ուշադրությո՛ւն դարձրու ուղղագրությանը.

 ________________  ________________

 ________________  ________________

 ________________  ________________

 ________________  ________________

 ________________  ________________

բ) այդ բառերով կազմի՛ր բառակապակցություններ ու գրի՛ր.

**29.** Գրի՛ր քո իմացած այն բառերը, որոնց սկզբում *ը* ձայնավորը լսվում է, բայց չի գրվում.

*սպի, զգեստ, ստանալ,*

## Ոսկի աշուն

**30.** Արտագրի՛ր՝ բառերը վանկերի բաժանելով.

### Վերջին տանձենին

Մի տանձենի մեն-մենակ
Սվսվում է բացատում,
Աշնան քամուց թմփոցով
Վերջին տանձերն են կաքում:
Հապա փորձի՛ր մոտենալ...
Արջուկները մռքմռքան
Քեզանից շուտ կհասնեն
Ու տանձերը կուլ կտան:



*Ս. Մուրադյան*

***Օրինակ***՝ *Մի տան-ձե-նի մեն - մե-նակ...*

**31.** Արտագրի՛ր բառերը՝ վանկերի բաժանելով.

*շղթայել* – <u>*շղ-թա-յել*</u> ____________________

*թթենի* – ______________________________

*շշնջալ* – ______________________________

*զգաստ* – ______________________________

*փափսալ* – ______________________________

*զգեստ* – ______________________________

*թռչել* – ______________________________

*զգույշ* – ______________________________

*սպասել* – ______________________________

*թմբուկ* – ______________________________

**32.** Ուշադի՛ր կարդա՛ և *շեշտ* (՛) դիր այն բառերի վրա, որտեղ պետք է.



*Արև, արև, դուրս արի*
*Ու մոր նման ժպտա մեզ.*
*Մ՜ի, այնպե՜ս ենք քեզ սիրում՝*
*Ծիլը, ծիտը, մեկ էլ՝ ես:*

*Գ. Խաչատրյան*

*Արի, արի, սիրուն մեղու՝*
*Ե՛կ ջրաչան, և՛ կայտառ,*
*Բաց եմ արել թերթիկներս,*
*Արի քաղիր, հյութս տար:*

*Մ. Կորյուն*



**33.** Տրված բառերով կազմի՛ր նախադասություններ. վերնագրի՛ր ստացված պատմությունը.

*եղանակ, ցրտել, ցերեկներ, կարճանալ, գիշերներ, երկարել, ծաղիկներ, խոտեր, չորանալ, տանձ, խնձոր, դեղձ, խաղող, նուռ, հասնել, այգիներ, բերք, հավաքել, թռչուններ, չվել, տաք, երկրներ:*

____________________________________________

____________________________________________

____________________________________________

____________________________________________

____________________________________________

____________________________________________

____________________________________________

____________________________________________

**34.** *«Աշուն»* տեքստի մեջ գտի՛ր տրված բառերի *հակառակ իմաստն* ունեցող բառերը և գրի՛ր.

*ավարտվել* – ____________________

*դադարեցնել* – ____________________

*ավելանալ* – ____________________

*կարճանալ* – ____________________

*դուրս գալ (ելնել)* – ____________________

*արթնանալ* – ____________________

*փաքանալ* – ____________________

*բերել* – ____________________

*հանել (մորթին)* – ____________________

**35.** Լրացրո՛ւ նախադասությունները՝ ճի՛շտ տեղադրելով բառերը.

• տա՛ռ - թառ • լուր - լուռ • վաղ - վախ • այդ - այտ:

• *Կարմիր կատարներով սև ու սպիտակ հավիկները նստած էին երկար ____________ վրա:*

• *Արամը լրացրեց բաց թողնված ____________:*

• *Գարնան ____________ մեզ բերում են ձնծաղիկն ու մանուշակը:*

• *Ծառի տերևները ______ արտասվում էին աշնան անձրևից:*

• *Նապաստակը կուչ էր եկել ու դողում էր ______:*

• ______ *առավոտյան պապղում եղյամ էր նստել խոտերի վրա:*

• *Երբ արևը համբուրեց կեռասիկի ______, նա հուզմունքից կարմրեց:*



• ______ *գիշեր սարդիկները կայծկլտում էին երկնքում ու կամացուկ ժպտում Լուսինին:*

**36.** Բառերի հետևյալ զույգերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ և բացատրի՛ր ուղղագրությունը.

| | |
|---|---|
| բագուհի – Թագուհի | մանուկ – Մանուկ |
| կորյուն – Կորյուն | աշտարակ – Աշտարակ |

***Օրինակ***՝ *Մայր առյուծը մռնչում էր ու փնտրում իր* ***կորյունին****:*
*Կորյունը բարի ու աշխատասեր տղա է:*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**37.** Յուրաքանչյուր բառի իմաստը բացատրի՛ր այն կազմող բառերի օգնությամբ (*աշխատեցե՛ք խմբերով*).



*չիրապտուղ –* *չիրենու պտուղ (չեր տվող պտուղ)* ______

*ծրաջան –* *ծիր և ջանասեր* ______

*շագանակագույն –* ______

*տերևաթափ –* ______

*պտղատու –* ______

*մրգառատ –* ______

*մեղմօրոր –* ______

*ջրափոս –* ______

*աշխատասեր –* ______

**38.** Փորձի՛ր աշնան մասին մի հանելուկ հորինել՝ օգտվելով հետևյալ բառերից.

*տերև, դեղնել, քամի, սուլել, անձրև, մաղել, օր, կարճանալ:*

### Հանելուկ

______

______

______

______

*Այդ ե՞րբ է լինում:*



**39.** Արտագրի՛ր՝ ավելացնելով *-եր* կամ *-ներ*.

**Հիշի՛ր. *երգ+եր, քա-ղաք+ներ.***

| | | | |
|---|---|---|---|
| *տերև –* | ______ | *զգեստ –* | ______ |
| *ճյուղ –* | ______ | *կոճին –* | ______ |
| *սկյուռ –* | ______ | *թիթեռնիկ –* | ______ |
| *մեղեդի –* | ______ | *կրիա –* | ______ |
| *ձեռք –* | ______ | *օձ –* | ______ |
| *թռչուն –* | ______ | *եղջերու –* | ______ |
| *պատյան –* | ______ | *որդ –* | ______ |

**40.** *«Տերևաթափ»* բանաստեղծության միջից, *«Բնության ձայներ»* առաջադրանքից ու *հանելուկներից* գտի՛ր հետևյալ բառերին *իմաստով մոտ* բառեր և գրի՛ր.



*աստղաթափիկ* – *տերևաթափիկ* ____________________

*երփներանգ* – ____________________

*գույնզգույն* – ____________________

*թախծոտ* – ____________________

*պտղիկ(ներ)* – ____________________

*խշխշալ* – ____________________

*ցած գալ* – ____________________

*քչքչալ* – ____________________

*հով անել* – ____________________

**41.** Կետերի փոխարեն տեղադրի՛ր *ղ* կամ *խ*.

- *Ծովինարը կարմիր մե...ակները դրեց ծա...կամանի մեջ:*
- *Արամը թ..:թից մի փոքրիկ նավակ պատրաստեց ու իջեցրեց առվակի մեջ:*
- *Մեր ծառի դե...ձերը քա...ցր են ու հյութալի:*





- *Քույր ու ե...բայր գնացին անտառ՝ սունկ հավաքելու:*
- *Փոքրիկ ա...ջիկը ջուր էր խմում սառնորակ ա...բյուրից:*
- *Ու...տը երկու սապատ ունի:*





**42.** ա) Կարդացե՛ք և ընդգծեցե՛ք *ընդհանուր իմաստ* ունեցող բառերը (*աշխատե՛ք զույգերով*).

բ) *ընդհանուր իմաստ* ունեցող յուրաքանչյուր բառի դիմաց աղյուսակում գրեցե՛ք նրա *մասնավոր իմաստն* ունեցող բառերը.

*շագանակագույն, գույն, պտղատու ծառ, ծիրանենի, ուռենի, ոսկեգույն, ոչ պտղատու ծառ, նռնենի ձիթենի, սեպտեմբեր, կեչի, սոճի, հոկտեմբեր, նոյեմբեր, ամիս, բարդի, եղևնի, մանուշակագույն, դեղին, որթատունկ:*

| Ընդհանուր իմաստ ունեցող բառեր | Մասնավոր իմաստ ունեցող բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |



**43.** Կարդա՛ «*Պարահանդես անտառում*» հեքիաթը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին.

*1. Ո՞րն է գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը:*

*2. Ո՞ր բառերն են նկարագրում աշնանային փերիներին:*

*3. Ո՞ր բառերն են նկարագրում սրինգների նվագը:*

*4. Ի՞նչ պատկերներով են նկարագրված ուռենին, կաղնին, մասրենին:*

*5. Ի՞նչ կզգայիր, եթե ներկա լինեիր անտառի պարահանդեսին:*

**44.** Կետերի փոխարեն տեղադրի՛ր *գ* կամ *ք*.

*Աշնանը բոլոր ծառերը գույնզ...ույն զ...եստներ են հա...նում: Միայն եղևնին չի փոխում իր կանաչ հա...ուստը: ...իշերվա սառը ...ամին օրորում է ճյուղերը, և փո...րիկ սերմերը սվսվալով իրենց եր...ն են եր...ում:*

*Իսկ առավոտյան ծա...ում է արևն ու տա...աց-նում մրսած ծառերը:*



### Մանուկների աշխարհում

**45.** Տրված երկու շարք բառերով կազմի՛ր այնպիսի բառակապակցություններ, որոնք կը-բնութագրեն *«Մանուկների աշխարհը»*.

- *ծաղիկներ, թռչուններ, արև, երեխաներ, խաղեր, ծիծաղ, երգեր.*
- *ուրախ, զվարթ, երգեցիկ, գրնգուն, անթառամ, ոսկեթել, զվարճալի:*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**46.** Փորձի՛ր հետաքրքրական ավարտ հորինել այս պատմության համար.

*Արմանի աշնանային արձակուրդը շատ ուրախ անցավ, հատ-կապես՝ վերջին օրը ...*

*Արմանը հայրիկի և քույրիկի հետ դաշտ էր գնացել: Շուրջը այնքա՜ն գեղեցիկ էր:*

*Հանկարծ մի հսկա օդապարիկ իջավ խոտերի մեջ: Արմանը,*

*շունչը պահած, զգույշ մոտեցավ օդապարիկի զամբյուղին...*



**47.** Փորձի՛ր նկարագրել, թե ինչպե՛ս է ծագում արևը՝ օգտվելով տրված բառերից ու արտահայտություններից.

*վաղ առավոտ, սարերի հետևից, հայտնվել, քնից արթնացող արև, արեգակ, ճեղքել գիշերվա մութը, ոսկեգույն ճառագայթներ (շողեր), լուսավորել ու ջերմացնել աշխարհը, ոսկեգույն արև, բարձրանալ կապույտ երկինք, քնությունը արթնանալ:*



**48.** Բաց թողնված տառերի փոխարեն տեղադրի՛ր *ք* կամ *փ*.



*Իմ ավագ եղ...այր Բա...կենը ամեն առավոտ մարզվում է, հետո լվացվում է աղ...յուրի սառը ջրով և շ...ումներ կատարում կոշտ սր...իչով: Իսկ իմ երեսսր...իչը շատ ...ա...ուկ է ու նուր..., որովհետև ես ...ոքրիկ ու նըր-...իկ աղջիկ եմ: Եր...  եղ...այրս մարզվում է, ես էլ եմ ...որձում նրա հետ պարապել. չէ՞ որ դա շատ առողջարար է:*



**49.** *«Իմ օգնականը»* գիրք-տետրում կարդա՛ *«Ի՞նչ դառնալ»* բանաստեղծությունը. գտի՛ր *մարդ* նշանակող բառերը և տրված բացատրություններից յուրաքանչյուրի դիմաց գրի՛ր ճիշտ բառը.

*հագուստեղեն կարող վարպետ –* ________________

*մետաղից իրեր պատրաստող վարպետ –* ________________

*պատ շարող վարպետ –* ________________

*երիտասարդ պարիքի հասնող տղա (աղջիկ) –* ________________

**50.** Բացատրի՛ր տրված զույգ բառերի իմաստներն ու ուղղագրությունը և դրանք ճի՛շտ տեղադրիր նախադասություններ մեջ.

- համեստ–Համեստ, • քաղցր–Քաղցրիկ, • անուշ–Անուշ(իկ),
- քաջ–Քաջիկ, գեղեցիկ–Գեղեցիկ:

- *Համիկը շատ* ________________ *աղջիկ է:*
- ________________ *սովորում է երաժշտական դպրոցում:*
- *Մեր ծիրանենին շատ* ________________ *ծիրան է տալիս:*
- ________________ *մայրիկը բժշկուհի է:*
- *Մեղրիի թուզը շատ* ________________ *ու համեղ է:*
- ________________ *երկար ոսկեգույն մազեր ունի:*
- *Վարդանը շատ* ________________ *տղա է:*
- ________________ *փայտից ձնակ պատրաստեց:*



*Պարտեզում* ________________ *ծաղիկներ են բացվել:*

*Անին* ________________ *մրերիմ ընկերուհին է:*

**51.** Հարցերին պատասխանի՛ր մեկ բառով.

- *Ի՞նչ են ձին, շունը, վագրը –* ____________
- *Ի՞նչ է տալիս մարդուն ոչխարը –* ____________
- *Ի՞նչ են մատանին, ականջօղը, վզնոցը –* ____________
- *Ո՞ր սենյակում ենք ընդունում հյուրերին –* ____________
- *Ո՞րն է բժիշկ, ուսուցիչ, երգիչ բառերի ընդհանուր իմաստն ունեցող բառը –* ____________
- *Ո՞ր ծաղիկն է ծաղիկների թագուհին –* ____________

**52.** Գրի՛ր մարդու անուններ, որոնց մեջ լինի *վարդ* բառը.

______________________________________________

______________________________________________

**53.** Արտագրի՛ր տրված բառերը առանձին սյունակներով՝ օրինակի պես.

*օձ, ձայն, արձան, բարձիկ, դեղձ, ձագուկ, վրձին, արձակուրդ, բարձրություն, Աղավնաձոր:*






**54.** Արտագրի՛ր՝ նախադասությունները լրացնելով համապատասխան բառերով. *ստորակե՛տ* (,) դի՛ր այնտեղ, որտեղ պետք է.

*1. ____________________ կենդանիների խմբեր են:*
*2. ____________________ խոտակեր կենդանիներ են:*
*3. ____________________ մսակեր կենդանիներ են:*
*4. ____________________ երկոտանի կենդանիներ են:*
*5. ____________________ երաժշտական գործիքներ են:*

սագ, կիթառ, գայլ, հոտ, հավ, այծ, քնար, ոհմակ, ընձուղտ, վագր, արջ, փիղ, երամակ, ջութակ, հնդկահավ

**Օրինակ՝** *Եղջերուն, առյուծը, ձին, շունը չորքոտանի կենդանիներ են:*

**55.** Արտագրեցե՛ք տրված արտահայտությունները՝ կապույտ գույնով գրված բառերի փոխարեն գրելով դրանց *հակառակ իմաստն* ունեցող բառերը (*աշխատեցե՛ք զույգերով*).

*կոպիտ **ձայն*** — ____________________
*պաղ **քիթ*** — ____________________
*հորդառատ **անձրև*** — ____________________
*խուլ **որոտալ (ամպը)*** — ____________________
*կամացուկ **երգել*** — ____________________
*զվարթ **ժպտալ*** — ____________________
*հիվանդ **մայրիկ*** — ____________________
*գիշերային **լռություն*** — ____________________
*հանգիստ **քնել*** — ____________________
*խենթ **գառնուկ*** — ____________________

**56.** Ճի՛շտ տեղադրիր տրված բառերը՝ փոփոխելով դրանց ձևը, եթե պետք է.

| | |
|---|---|
| • ________________, մեղուն ու զատիկը ________ ________________ են: <br> • Անտառից դուրս եկած ________________ երկար ու գեղեցիկ ________________ ուներ: <br> •________________ ապրում են քարայրների ________________: <br> • ________________ բույնը կոչվում է ________: <br> • Փոքրիկ ________________ օգնեց տատիկին, որ նա ________________ սանդուղքներից: | *արջ, որջ* <br> *աղջիկ, իջնել* <br> *մրջյուն, միջատ* <br> *չղջիկ, մեջ* <br> *եղջերու, եղջյուր* |

**57.** Կետերի փոխարեն տեղադրի՛ր *այ* կամ *յա, ույ* կամ *յու.*



| *այ-յա* | *ույ-յու* |
|---|---|
| Հրաչ........ | Կոր........ն |
| Ժիր........ր | Վր........ր |
| Հր........ր | Ձ........նիկ |
| Աս........ | Պար........ր |
| Արուս........կ | Արշալ........ս |
| Հ........կուհի | Վերջալ........ս |
| Հ........րապետ | Զեփ........ռ |
| Մետաքս........ | Հարութ........ն |



**58.** Յուրաքանչյուր բառի իմաստը բացատրի՛ր այն կազմող բառերի օգնությամբ (*աշխատեցե՛ք խմբերով*).

*բարեկիրթ* – <u>*բարի և կիրթ*</u>________________

*մսակեր* – <u>*միս ուտող*</u>________________

*խոտակեր*– ________________________________

*ճերմակճակատ* – ____________________

*ինքնամոռաց* – ____________________

*գազօջախ* – ____________________

*երկոտանի* – ____________________

*չորքոտանի* – ____________________

**59.** Արտագրի՛ր տրված բառակապակցությունները՝ կապույտ գույնով գրված բառերի փոխարեն գրելով դրանց *մոտ իմաստն* ունեցող բառերը.

*քնքուշ* ***մեղեդի*** – ____________________

*գանազան* ***ուտելիքներ*** – ____________________

*հանգիստ* ***որոճալ*** – ____________________

*հրաշալի* ***բառ*** – ____________________

*իսկույն* ***գնալ*** – ____________________

*թովիչ* ***երգ*** – ____________________

*շիտակ* ***նայել*** – ____________________

*ապշած* ***կանգնել*** – ____________________

*խաղաղ* ***երեկո*** – ____________________

*արևի* *շող* – ____________________

*հանճարեղ* *կոմպոզիտոր* – ____________________

*շարունակ* *աշխատել* – ____________________



**60.** Գրի՛ր, թե ի՞նչ տեսար երազում.



**Իմ երազը**

**61.** ա) Սովորի՛ր ծրարի վրա հասցե գրել՝ օրինակի պես.



*ք. Երևան 12*

*Մանուշյան փողոց, տուն 11*

Ո՞ւմ *Խաչատրյան Արամին*

*ք. Էջմիածին*

*Մաշտոցի փողոց, շենք 2, բն. 16*

Ումի՞ց *Խաչատրյան Ծովինարից*

բ) մի նամա՛կ գրիր տատիկիդ կամ պապիկիդ և նրանց հրավիրի՛ր քո տարեդարձին.

____________________ 1. Քաղաք
____________________ Ամսաթիվ

____________________ 2. Ո՞ւմ ես գրում

________________________________________ 3. Նամակի բովանդակությունը
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________

____________________ 4. Ավարտի խոսք
________________ և անուն



____________________
____________________
Ո՞ւմ ____________________

____________________
____________________
Ումի՞ց ____________________